Կառավարութեան բնոյթի փոփոխման դրական ազդեցութիւնը ժողովրդական դանդուածների վրա անկասկած է. այդ փոփոխութիւնը հոգեբանական այն նշանակութիւնը կունենայ, որ Հայաստանի դեմոկրատիան կը զգայ, թէ սկսած է վերակազմութիւնը և կը սթափի:

Ապա՝ մեր ախտաւոր երևոյթները բուժել կարող է միայն նորակազմ կառավարութիւնը, որովհետև նա է, որ նոր հայեացքով պիտի տեսնի այդ-պիսիք:

Կառավարութեան վերակազմութեան զուգընթաց տեղի պիտի ունենայ ժողովրդի վերակազմութիւնը. մենք ականատես եղանք այնպիսի իրադարձութեանց, որոնք միայն ամօթ պիտի բերեն մեր ժողովրդին. տեսանք այնպիսի թուլամորթութիւն, որ արհամարհանք պիտի առաջացնէ շատերի մէջ հանդէպ մեր ժողովրդի:

Սակայն, դա ժամանակաւոր երևոյթ է. պէտք է ընթանալ ուղիղ ճամբով, և ժողովուրդը կը զգաստանայ, իսկ դրան կարելի է հասնել երկու կերպ — դիտակից քաղաքացուն դնել իր դիրքի վրա, անդիտակցին քարշ տալ դէպի այդ դիրքը. իւրաքանչիւր դիտակից քաղաքացի պիտի կատարէ կրկնակի աշխատանք. նա պիտի հանդէս գայ հայրենիքը պաշտպանելու և իր յետևից քարշ տայ փոքրոգիներին, անդիտակիցներին:

Կառավարութեան ու ժողովրդի վերակազմութեան միջոցով միայն հնարաւոր կը լինի փրկել երկիրը այս ծանր փորձութիւնից:

Հ. Սարգսեան (դաշն.). — Ծանր ապրումները մեզ համար բացառիկ երևոյթներ չեն, աւելի դժուարին պայմանների մէջ ենք եղել երբեմն. Տաճկաստանի դէմ մենք պայքարել ենք տասնեակ տարիներ, երբ դեռ պետութիւն չէինք, ու չդադարեց պայքարը այն օրից, երբ պետութիւն դարձանք: Տեսական է այս պայքարը և յուսահատութեան ոչ մի հիմք չկայ. չկայ, մանաւանդ, այժմ, երբ զգաստացել է մեր ժողովուրդը ու նրա բոլշևիկան վհատութիւնը տեղի է տուել բարձր ոգևորութեան: Նման պայմաններում, մեր ժողովրդի մէջ նկատուող բարձր տրամադրութիւնն ու զգաստացումը որոշ ուղղութեան տակ դնելու այս օրերին կառավարութեան վերակազմութեան խնդիրը յարուցել՝ կը նշանակէ ընկնել Քերենսկու փորձերի յետևից, կը նշանակէ կոտրել մասսայական ոգևորութեան թափը: Ընդհակառակը, հէնց այժմս է, որ մենք պիտի խուսափենք դրսի պայքարը կառավարութեան մէջ փոխադրելուց, հէնց այժմս է, որ մենք ամուր պիտի պահպանենք միատարր կառավարութիւնը, որովհետև յաղթանակ տանելու պայմաններից մէկը կառավարութեան միակամութիւնն է:

Միայն անհրաժեշտ է, որ կառավարութիւնը խիստ, թէկուզ, դաժան միջոցներով պատժէ սպարտապանցներին, յանցապարտներին: Կրկնում եմ, ժողովուրդը զգաստացած է, նա արդէն դիտակցում է իրեն սպառնացող վտանգի մեծութիւնը և եթէ կառավարութիւնը անթերի կերպով կարողանայ ամենքին յետ մղել դէպի իր պարտականութիւնը և խստութեամբ դատել անսաստողներին, ապա այդ զգաստացումը կը լինի տևական և ոգևորութիւնը բուռն: Լքման, յուսահատութեան մտքերով տարուելու ոչ մի պատճառ չունենք: Հայ ժողովուրդը՝ կորովի ու ազատասէր՝ շատ անգամ ջախջախիչ հարուածներ է հասցրել թշնամուն, այս անգամ ևս կը խորտակէ նրա ոյժը:

Հ. Տէրտէրեան (դաշն.). — Եթէ յաղթութիւն տանելու համար կառավարութիւնը խոշոր նշանակութիւն ունենար, ապա պատգ. Մոնդկարեանի առաջադրած խնդիրը հեշտութեամբ կը լուծէր, բայց, իրապէս, նրա նշանակութիւնը մեծ չէ: Գերման գօրավար Հինդենբուրգը ասել է. կը յաղթէ նա, ով ամուր ջղեր ունի: Մեր անյաջողութեան պատճառներից մէկն էլ